<<ՋԻ & Էլ ԻՆՎԵՍՏ >>ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ 2023 թթ բնութագրվեց տնտեսական ակտիվության ոչ բարձր մակարդակով՝ կապված տարբեր պատճառների (աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված) հետ, ինչը ոչ բարենպաստ պայմաններ ստեղծեց «ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) բիզնես ծրագրով նախատեսված ցուցանիշների ապահովման համար: 2023թթ բիզնես միջավայրն արտահայտվեց տնտեսական ակտիվության մակարդակի նվազմամբ՝ իր բացասական ազդեցությունը թողնելով Ընկերության գործունեության վրա:

2023թ.-ին Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում ամրապնդվելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի, ինչպես նաև շահույթի ապահովումը /թեկուզև ոչ շոշափելի/:

2023թ.ի ընթացքում ընկերությունը համագործակցել է արժեթղթերի շուկայի մասնակիցների՝ ինչպես դիլեր բանկերի այնպես էլ այլ ֆիանսական կազմակերպությունների հետ՝ ստեղծելով գործնական հարաբերություններ:

Ընկերության պետական տոկոսային արժեթղթերը 2021թ.-ին կազմել են 87.498.000 դրամ, 2022 թ.-ին՝ 92.879.000 ՀՀ դրամ, իսկ 2023 թվականին՝ 104993000 ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ավելացել է 12114000 ՀՀ դրամով: 2023թ.-ի ընթացքում ընկերությունը շարունակում է հիմքեր ստեղծել արժեթղթերի շուկա հաճախորդներ ներգրավելու համար: 2023թ.-ին իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումն ընթացքում ձեռք են բերվել հիմնականում ՀՀ պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել ռիսկային գործոնը:

2023թ.-ին ևս Ընկերությունը չի իրականացրել ռեպո գործարքներ՝ կապված ֆինանսական շուկայում վարկային տոկոսադրույքների, ինչպես նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքի համեմատական բարձր մակարդակի հետ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր ակտիվները կազմել են 107371000 ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավելացել է 12.6%-ով: Ընդհանուր կապիտալը կազմել է 79794000 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է նախորդ տարվա ընդհանուր կապիտալը 31% -ով, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 27577000 ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 25%-ով :

Ընդհանուր պարտավորությունների և Ընդհանուր կապիտալի հարաբերակցության մակարդակը 2023 թվականի ընթացքում կազմել է 0.35, իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը՝ 0.74:

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ևս Ընկերության արժեթղթերի պորտֆելում գերակշռում են երկարաժամկետ ՊՊ պարտատոմսերը: Հաշվետու տարում նույնպես ընկերությունն իր արժեթղթերի պորտֆելը համալրել է ՀՀ կարճաժամկետ պետական պարտատոմսերով: Ընկերությունը մտադիր է շարունակել պորտֆելի համալրման գործընթացը և 2023թ. մասնակցել կարճաժամկետ պետական պարտատոմսերի հերթական տեղաբաշխումներին՝ արժեթղթերի շուկայի կայունության պայմաններում:

2023թ.-ին՝ ի տարբերություն 2022թ-ի, ընկերության ֆինանսական գործունեության արդյունքը եղել է դրական՝ կազմելով 526000 ՀՀ դրամ, ինչը փաստում է , որ 2023թ.-ին կազմակերպությունը իր առջև դրված խնդիրը /ունենալ դրական ֆինանսական արդյունք/ կատարել է:

Ներքին աուդիտի ղեկավար՝ Վարդուհի Փափազյան